

ԱՐԵՎՀԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝

Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան
arevik.54@mail.ru

ՀԱՋՈՂՎԱԾ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ (Ն. Աբգարյանի «Երկնքից երեք խնձոր ընկավ» վեպի թարգմանության լեզուն և ոճը)**

Քանալի բառեր՝ ժողովրդական լեզվամտածողություն, ոճ, բառօգտագործում, մակդիր, համեմատություն, փոխաբերություն, դարձվածք:

Ներածություն

Նարինե Աբգարյանը՝ նվաճել է տարբեր ժողովուրդների սրտեր, ունի տարբեր ազգությունների պատկանող ընթերցողների մեծ քանակ: Այդ համընդհանուր սերը, հետաքրքրվածությունը դեպի նրա գրքերը, կարծում ենք, ոչ միայն նյութի, թեմայի, այլև մատուցման, լեզվի շնորհիվ է: Չնայած հեղինակը հայ կյանքի, կենցաղի մասին գրում է ռուսերեն, սակայն զգացվում է հայկական շունչը: Նման հեղինակի ստեղծագործությունները թարգմանելիս բարդ է լինում թարգմանչի գործը. ստեղծագործությանը հաղորդել ազգային շունչ ու ոգի, հնչեղություն, տվյալ միջավայրի շնչառություն, հեղինակի ոգու և լեզվամտածողության պահպանում: Դա, կարծում ենք, հաջողվել է Ն. Խաչատրյանին՝ Ն. Աբգարյանի «Երկնքից երեք խնձոր ընկավ» վեպը թարգմանելիս:

Հ. Թումանյանը լեզուն որակել է որպես հոգի և հոգեբանություն: Սակայն յուրաքանչյուր հեղինակ ունի իր ոճը: «Ոճը բոլորովին այլ հարց է. լեզուն հասարակաց է,- գրում է Հ. Աճառյանը,- ոճը հեղինակինն է. առաջինը ընդհանուր է,

* Հոդվածը ներկայացվել է 15.06.2019, գրախոսվել է 01.10.2019, ընդունվել է տպագրության 05.12.2019:

** Աբգարյան Ն., Երկնքից երեք խնձոր ընկավ (թարգմ. Ն. Խաչատրյանի, «Օրակույ» հրատ., 2017, 240 էջ):

¹ Ն. Աբգարյանը մոտ 25 տարի ապրում է Մոսկվայում: Նրա ստեղծագործական կյանքը թեև շատ երկար պատմություն չունի, սակայն նրա ստեղծագործություններն արժանացել են ծանրակշիռ մրցանակների: «Երկնքից երեք խնձոր ընկավ» վեպի համար 2016 թ. ստացել է «Յասնայա պոլյանա» մրցանակը «21-րդ դար» անվանակարգում: Թարգմանությունը՝ Ն. Խաչատրյանի:

երկրորդը անհատական: Ամեն մի հեղինակ, նայած իր կրթության, ճաշակին, զգացմունքների նրբությանը, նայած նույնիսկ թույլ տրամադրության, ունենում է առանձին, սեփական ոճ»²: Շատ ինքնատիպ է Ն. Աբգարյանի «Երկնքից երեք խնձոր ընկավ» վեպի լեզուն և ոճը, որը, կարծում ենք, պահպանվել է թարգմանչի կողմից: Վեպը հիմնականում պատմողական բնույթ ունի, նկարագրությունները քիչ են: Ուշագրավ է վեպի սկիզբը. «Ուրբաթ օրը՝ ճաշից հետո, երբ արևը, անցնելով բարձր զենիթը, հանդիսավոր գլորվեց հովտի արևմտյան կողմը՝ Սևոյանց Անպրոշի պատկեց մեռնելու: Մինչև էն աշխարհի ճամփան բռնելը՝ նա տեղը տեղին ջրել էր բոստանն ու հավերին կեր լցրել սովորականից շատ...»³: Կարծես թե ժողովրդական բանահյուսության մի պատառիկ կամ գուլպա գործող տատիկներից մեկի խոսք ու զրույց լինի, որ մանրամասն պատմում է՝ զարմանալի դիտողունակությամբ նկատելով ամեն ինչ. ջրհորդանների տակ դրված տակառների կափարիչների բացելը՝ անսպասելի անձրևից տան հիմքը չվնասվելու համար...., վերջին հանգրվանի կապոցի պատրաստելը՝ թաղման ծախսերի համար փողի ծրարը վրան դրված, և էլի մանրամասներ:

Վեպում քիչ է գրական պերճախոսությունը, փոխարենը կա բառընտրություն, որի շնորհիվ խոսքը դառնում է ավելի տպավորիչ: Տեղին կլինի հիշել Մ. Գորկու միտքն այն մասին, որ բառերով նկարագրվածը ընթերցողին պետք է մատչելի լինի շոշափելիության չափ⁴: Պատումի ցանկացած հատված գրկիական առարկայականություն ունի: Վեպում հիմնականում չկան բազմաբաղադրիչ կառույցներ, իսկ եթե կան էլ, ապա բաղադրիչ նախադասությունները հստակ են, հասկանալի, առանց ավելորդ բառերի ու միջանկյալ արտահայտությունների: Հեղեղված չէ պատկերավորության միջոցներով, սակայն կան պատկերավոր մտածողության փայլուն օրինակներ: Թարգմանիչը ինքնատիպ մակդիրների, համեմատությունների, փոխաբերությունների միջոցով արտահայտչական հզոր լիցք է հաղորդել իր խոսքին: Գյուղի նկարագրությունները տխուր տպավորություն են թողնում, այդ պատճառով էլ ուղղակի քիչ են հիացական, տրամադրություն ստեղծող մակդիրները՝ *կենսախիճ գյուղ* /46/, *արթնացող բույսեր* /156/, և շատ են ցավ ու ափսոսանք առաջացնող պատկերները՝ *համր խաչքարեր* /25/, *լուսնի երկչուր շողեր* /40/, *կույր պատուհանի շրջանակներ* /172/, *խլացնող մենության փախչող էություն* /172/: Բերված մակդիրները պատմում են լքված, դատարկված գյուղի մասին, որոնք զգացմունքային ըն-

² Աճառյան 1951, 101:

³ Աբգարյան 2017, 5:

⁴ Горький 1941, 149:

Խաչատրյան Ա.

կալման արտահայտություններ են, լիքն են թախիծով ու տխրությամբ: Նույն տրամադրությունը զգացվում է նաև այս փոխաբերություններում՝ «*Դարբնոցը ծերանում էր ու մեռնում*» /77/, «*Պատերազմը նահանջեց՝ տանելով իր հետ երիտասարդներին*» /39/: «*Գյուղը՝ դատապարտված ու հնազանդ (մակդիր), իր վերջին տարիներն էր ապրում (փոխաբերություն)*» /40/: «*Գյուղը տազնապի սպասումով քարացել էր*» /42/, «*Գյուղը լռում էր՝ իր քարե գրկի (մակդիր) մեջ փայփայելով տարածվող անծայրածիր թախիծը*» /172/:

Վեպը ընդհանուր առմամբ դրական, բարի լիցքեր է հաղորդում, և քիչ չեն այդ լիցքերով պարուրված փոխաբերությունները՝ «*Ասրդերը դեռ չէին հասցրել հալվել երկնքում*» /156/, «*Թռչնակները օրվա երգն էին հյուսում*» /156/, «*Աշխարհը հրճվում ու երգում էր*» /156/, «*Կյանքը կամաց-կամաց սկսեց կարգավորվել, ճոռոցով հունի մեջ ընկնել*» /43/, «*Ցողը նստել էր, կիսաքուն ծաղիկներից (մակդիր) քամել թանձր բույրն ու սփռել երկրի վրա*» /22/, «*.... Լուսանկարները.... քոչել են փայտյա զարդատուփ ու համբերատար սպասում են հայրական տուն վերադառնալուն*» /58/:

Ն. Խաչատրյանը ընդգծված արտահայտչական նշանակությամբ է գործածել նաև համեմատությունները, որոնք ստեղծում են խոսուն պատկերներ՝ «*Ժայռի պես կուռ, գառան փափուկ հոգով՝ թողը....*» /226/: Այստեղ թողին վերագրում է և՛ ժայռի պես կուռ լինելը, և՛ գառան նման փափուկ հոգի ունենալը: Կուռ բառը ԺՀԲԲ⁵-ում տրված է *կռած, կոփած, ամուր, ամբողջական* և այլն իմաստներով, իսկ *փափուկ*-ը նույն բառարանում տրված է նաև *փխրուն* իմաստով: Հեղինակը իր հերոսին ներկայացնում է որպես և՛ շատ ամուր, և՛ միաժամանակ շատ փխրուն, զգայուն հոգի ունեցողի: Ահա նմանատիպ պատկեր. «*Հավերժ ու բոլորի կողմից մոռացված, խռոված գյուղը, անդույլ լծակի պես կախ էր ընկած Մանիշ քարի ուսից*» /46/: Գյուղը խռոված է, քանի որ մոռացվել ու անտեսվել է բոլորի կողմից: Այն համեմատելով անդույլ լծակի հետ՝ հեղինակը կամեցել է ավելի ընդգծել այդ վիճակը, իսկ *կախ է ընկած* բայով արտահատվում է թարգմանչի վրդովմունքն ու ցավը: Իսկ հետևյալ համեմատություններում կա ջերմության, գոհունակության զգացողություն՝ «*Ոսկեն նրա գրկում փայլում ու շողշողում էր թանկագին քարի նման*» /16/, «*Թխամաշկ պապին նման էր ջրի երկու կաթիլի պես*» /49/:

Վեպում շատ հաճախ համադրվում են մակդիրն ու համեմատությունը, մակդիրն ու փոխաբերությունը կամ անձնավորումը: Այսպես՝ «*Տունը նրան դի-*

⁵ ԺՀԲԲ-ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1974, 244:

Հաջողված թարգմանություն...

մավորում է (անձն.) ոչ թե մեռելային լոռությամբ (մակդ.), այլ խնոցու կուշտ դմկոցով (մակդ.)» /79/: «Երաշտը...արևահողմի հաղթակառքով եկավ (անձն.)՝ զզվելի ու թացաչք, խիղճ չճանաճող ու անգութ (մակդ.)» /85/:

Պատկերավորության միջոցները հիացնում են իրենց ինքնատիպությամբ, թարմությամբ, արտահայտչականությամբ ու հուզականությամբ, ստեղծում են համապատասխան տրամադրություն ու զգացողություն: «Քնալու ու լռակյաց, սառցալուլաներով գլխաշորը մինչև աչքերը քաշած առավուրները բացվում էին չուզենալով և ուշ՝ թույլ շնչառությամբ ցրելով գիշերային վերջին մշուշը» (մակդիր, փոխաբերություն) /227/, կամ՝ «Փեղրվարը խորամանկում էր աճալարարի պես (համեմատություն). թևքերը թափ էր տալիս ու մանր փաթիլներով ձյունը լիքը-լիքը բռներով անվերջ լցնում (փոխաբերություն) քնած բակերը (մակդիր)» /227/: Շատ ասելիք կա բերված օրինակներից յուրաքանչյուրում, ամեն մի պատկեր որոշակի գաղափար է տալիս նկարագրվող իրողության, բառօգտագործման ճաշակի, բառընտրության նուրբ զգացողության մասին:

Եթե ռուսական գեղարվեստական ստեղծագործություններում գիշերը կարող է լինել լուռ, տագնապալի, համեստ, հայկական գիշերը տխուր է կամ ուրախ: Եթե ռուսական ցերեկները լինում են լուսավոր, արևոտ, քննարկվող վեպում դրանք ժպտուն են կամ թախծոտ: Դա խոսում է այն մասին, որ Ն. Խաչատրյանը թարգմանել է հայաշունչ ստեղծագործություն՝ մեր հայրենիքի մասին, և ընթերցողը բոլորովին չի զգում, որ դրա բնագիրը ռուսերեն է:

Վեպում նկատելի է նաև խոսակցական լեզվին բնորոշ բառերի ու բառակապակցությունների, դարձվածքների հաճախական գործածությունը, որոնք ավելի տարողունակ են, և ասելիքը դարձնում են խորիմաստ ու սեղմ:

Հարադրությունները բառերի այնպիսի միացություններ են, «որոնք թեպետ մեկ բառի նշանակություն ունեն, բայց սովորաբար մեկ բառ չեն համարվում և միացած իբրև մեկ բառ չեն գրվում»⁶: Իրենց ամփոփած նրբերանգների շնորհիվ էլ դրանք առանձնահատուկ հմայք են տալիս խոսքին, ժողովրդական լեզվամտածողության արդյունք են, ազգային բնութագիրը պահող նշածողերից, ժամանակի ընթացքում զտվել, մաքրվել ու դարձել են «գերագույն ճմարտություններ»⁷, հենց այդ նպատակով էլ վեպում շատ են գործածվել, օրինակ՝ «Թռչունները հավանոցում իրար էին անցել՝ անհամբեր սպասելով, թե երբ են դուրս թողնելու, որ մարգերում ման գան», կամ խորհուրդ անել, աղջիկ ունեն

⁶ Աբեղյան 1965, 169:

⁷ Սևակ 1948, 136:

Խաչատրյան Ա.

մարդու տալու, պար բռնել, խոր շունչ քաշել, ականջ ծակող, պառկել մեռնել, կաս-կարմիր կտրել, ծխել պրծնել, դիվադադար անել, քահ-քահ ծիծաղել, անեծք թափել, զրույց վարել, աշխարհը լքել, գեպնին փռել, վեր ու վար անել: Եթե թարգմանիչը խորհուրդ անել արտահայտության փոխարեն օգտագործեր խորհել բառը, կամ աղջիկ ունեն մարդու տալու-ի փոխարեն՝ աղջիկ ունեն ամուսնացնելու, կամ աշխարհը լքեցին/մահացան, գեպնին փռել/տապալել, դիվադադար անել /անհանգստացնել, արդյոք պատումը չէ՞ր տուժի, կպահպանվե՞ր ժողովրդական ոգին ու շունչը: Ակնառու է համեմատվող զույգերի արտահայտչական տարբերությունները: Կամ ի՞նչ բառերով պիտի արտահայտվեր *անտառ քոթուկ, պարսապ զրույց, վայ ամուսին* կապակցությունների իմաստները, որ պահպանվեր հեղինակի վերաբերմունքը, զգայականը, հուզականը, լինելին այդքան խոսուն ու ինքնատիպ: Հարադրությունները իրենց պարունակած իմաստային ենթաշերտերի շնորհիվ թողնում են ավելի մեծ տպավորություն և ազդեցություն:

Ն. Խաչատրյանն անշուշտ դիմել է նաև դարձվածքների, որոնք ժամանակների ծնունդ են, ծնվում են ժողովրդական բառ ու խոսքում, թրծվում կենսափորձի, կենսափիլիսոփայության քուրայում, և յուրաքանչյուրի տեղին կիրառությունը կշիռ է տալիս խոսքին: Դրանց առատ գործածությունը վեպում պատճառաբանված ու հիմնավորված է՝ *էն աշխարհի ճամփան բռնել, հոգին դուրս թռչել, լավ օր չտեսնել, քար կտրել, իրար անցնել, ջրի երկու կաթիլ, հոգոց հանել, հույսը կտրել, հոգու հեյր խաղալ, կաշվից դուրս գալ, ասեղ գցելու տեղ չլինել* և այլն, որոնք իրենց բազմաշերտությամբ լայնացնում են ասվածի իմաստը, հոգեհարազատություն են հաղորդում, պահպանում հեղինակի լեզվամտածողության ամբողջական տպավորությունը, նպաստում են խոսքի կենդանությանը, բնականությանը:

Վեպի լեզվին յուրօրինակ փայլ ու պայծառություն են տվել զուգադրական հարադրությունները, որոնք ոճական հարուստ լիցք են հաղորդում խոսքին, ավելի ազդեցիկ են, ունեն հնչեղություն, խտացնում են ասելիքը, տալիս բառի ու բովանդակության ներդաշնակություն, ինքնատիպության հմայք՝ *ունեցած-չունեցած, ոսկեշող-կուրացնող, ոլոր-մոլոր, երկար-բարակ, խելք-խրապ, աման-չաման, շոր-մոր, սուսիկ-փուսիկ, ահ ու սարսափ* և այլն:

Թարգմանիչն իր խոսքին սեղմություն, հակիրճություն հաղորդելու նպատակով հմտորեն դիմել է համադրական բարդությունների՝ *հոգեպահուստ, ինքնափաթթուկ, գորովաշարժ, ծածկապարզգամբ, ծածկասայլ, տոգորա-*

այինդ, բարիդրացիական, հաղթակառք, բմբուլաթափ, փեպրաներքնակ և այլն: Այս բառերը ճիշտ իրենց տեղում են, համահունչ ամբողջ շարադրանքին:

Շատ տրամաբանական է, որ վեպում կան բարբառային բառեր ու արտահայտություններ, թուրքապարսկական կամ նմանատիպ օտարաբանություններ, որոնց թարգմանիչը դիմել է միջավայրին հարազատ մնալու, խոսքը համոզիչ դարձնելու նպատակով՝ *բոստան, խալի, մութաքա, թագբեհ, զահրումար, գրագ, խլամ, հեչ, ֆուրգոն, թութուն* և այլն, որոնք հերոսի խոսքի տիպականացման, լեզվական միջավայրի ստեղծման միջոցներ են: Դրանք վարպետորեն են գործածվել, ներդաշնակվել են բովանդակությանը և ընդհանուր առմամբ՝ թարգմանության ոճին:

Ընթերցողի աչքից չեն վրիպում նաև հերոսների անուններն ու տոհմանունները, որոնք նույնպես հայկական ծագում ունեն, կրճատ են և նույնիսկ անսովոր: Սրանք գործածվել են բացառապես արտահայտչական նշանակությամբ, ծնվել են ինչ-ինչ դիպվածի հետ կապված և «ավելի հաճախ ծիծաղելի ու զվարճալի են, հազվադեպ վիրավորական»⁸ Սևոյանց *Կապիտոն, Մելիքանց Վանո, Նեմեցանց Մուկոչ, Շալվարանց Հովհաննես, Կուդամանց Վասիլ* և այլն: Անատոլիայի հարևանուհու՝ *Յասամանի* նախահայրը մառանցիների աչքին անսովոր գլխարկ (շլյապա) դնելու պատճառով կոչվել է *Շլյապկանց*: Կամ՝ Հովհաննեսի պապը պատերազմ է գնացել նոր, թանկարժեք շալվարով: Կովի դաշտ չհասած՝ վիրավորվել է ու անդամահատվել: «...Հովհաննեսի պապը, չգիտես ինչու, խոր ցավ է ապրել ոչ թե անդամահատված ոտքի, այլ նոր տաբատի համար: «Շալվարս, շալվարս,- բողոքել է քույրերին»⁹, ինչի համար էլ անունը Շալվար է մնացել, իսկ նրա սերունդները՝ Շալվարանց:

Եզրակացություն

Թարգմանչի խոսքում սկզբից մինչև վերջ գործածվում են ժողովրդական կենդանի խոսքին բնորոշ լեզվամիջոցներ: Թե՛ պատկերների նկարագրությունները, թե՛ բարբառային բառերը, թե՛ հարադրություններն ու համադրությունները և թե՛ այդ սովորական ու արտասովոր անձնանուններն ու տոհմանունները մերվել են վեպի բովանդակությանը, դարձել կուռ ամբողջություն և, լեզվական հմայքով, իմաստային նրբերանգներով, գրավում են ընթերցողին, և այդ ամենի գործածումը մտածողության յուրահատուկ ձև է, վեպի հաջողությունն էլ լեզվի, բառապաշարի, մատուցման մեջ է:

⁸ Աբգարյան 2017, 48:

⁹ Աբգարյան 2017, 49:

Խաչատրյան Ա.

Քննարկելով վեպի թարգմանության լեզուն և ոճը՝ գալիս ենք այն եզրակացության, որ թարգմանությունն հաջողված է: Թարգմանիչը հավատարիմ է մնացել ժողովրդական լեզվազգացողությանն ու լեզվամտածողությանը: Ընթերցելիս զգացվում է հայկականություն, հայկական խոսքաշխարհով միջավայր: Նկարագրությունները կենդանի են, հարազատ մեր առօրյային, թվում է՝ մենք էլ ենք վիպական այդ կյանքի մասնակիցը:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աբգարյան Ն. 2017, Երկնքից երեք խնձոր ընկավ, «Օրակույ», Երևան, 240 էջ:

Աբեղյան Մ. 1965, Հայոց լեզվի տեսություն, «Միտք», Երևան, 699 էջ:

Աճառյան Հր. 1951, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, «Հայպետհրատ», Երևան, 609 էջ:

ԺՀԲԲ-Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, 1974, ԳԱ հրատ., Երևան, 574 էջ:

Սևակ Գ. 1948, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, ԳԱ հրատ., Երևան, 277 էջ:

Горький М. 1941, Несобранные литературно-критические статьи, Москва, «Художественная литература», 552 с.

<https://eksmo.ru/interview/narine-abgaryan-kto-to-iz-kritikov-skazal-chto-ya-pishu-na-armyanskom-prosto-russkimi-slovami-ID5493583/>.

УДАВШИЙСЯ ПЕРЕВОД

ХАЧАТРЯН А.

Резюме

Ключевые слова: лингвомышление народа, стиль, использование слов, эпитет, сравнение, метафора, языковые обороты.

Фабула романа нашей талантливой соотечественницы Нарине Абгарян отражает мировосприятие, быт жителей села Маран. Перед читателем предстает укромный уголок Армянского нагорья с его жителями. В романе повествуется об опустевшей деревне с незначительным числом сельчан, которые, несмотря на житейские невзгоды, поддерживают друг друга, сохраняя в себе свет оптимизма.

Роман написан простым, доступным, но в то же время образным языком. С одной стороны, стиль изложения прост, с другой – он отличается выбором удивительно точной лексики и блестящих примеров образного мышления. Благодаря удачному использованию сравнений, метафор переводчик остался верен оригиналу, его стилистике, сумев передать всю его самобытность, присущее роману эмоционально-философское начало без «переводческих потерь».

A SUCCESSFUL TRANSLATION

KHACHATRYAN A.

Summary

Key words: *identity, uniqueness, style, use of the words, epithet, comparison, metaphor.*

The plot of the book covers the worldview, everyday life and routines of the inhabitants of the village of Maran, and the translation language and vocabulary remain true to that environment. A secluded corner of the Armenian Highlands is presented to the readers. The novel tells the story of a forgotten tiny village and its inhabitants who in the face of adversity keep helping and supporting each other as well as maintaining a positive attitude.

The style of the translation is simple and clear, however, the text contains precise identifications and brilliant examples of figurative thinking. Through the right choice of epithets, comparisons and metaphors the interpreter remains faithful to the original text, delivering its concept and uniqueness, emotional and philosophical core without “interpretation loss”.